ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 66/6

29-ը ապրիլի 2023 թվականի

ԵՊՀ ԻՄ-ում լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների իրականացման կարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2023թ. ապրիլի 29-ի նիստի թիվ 66/6 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

ԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ և ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների իրականացման» կարգը (այսուհետև՝ Կարգը) սահմանում է լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման, ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման ընթացակարգը:
2. Կարգը մշակվել է «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման» և «Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման» կարգերի (ՀՀ կառավարության 10 սեպտեմբերի 2015 թվականի N 1062-Ն Որոշում), ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների հիման վրա:
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) կողմից լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնելու նպատակն է հասարակության լայն խավերին հնարավորություն տալ ձևավորելու, կատարելագործելու, արդիականացնելու և լրացնելու մինչ այդ ձեռք բերած (նախընթաց) իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:
4. Մասնաճյուղը կարող է իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր և դասընթացներ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով գրանցվելով ուսուցման ազգային ռեեստրում[1], իսկ հավատարմագրված

[1] Ուսուցման ազգային ռեեստր - լրացուցիչ կրթության ծրագրեր իրականացնողների և մասնակիցների ազգային շտեմարան, տես ՀՀ օրենքը «ՀՀ կրթության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»՝ ընդունված 04.05.2022թ., http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=163051

մասնագիտությունների շրջանակներում Մասնաճյուղը կարող է ուսուցման ազգային ռեեստրում գրանցվել առանց նախապայմանների։

5. Լրացուցիչ կրթական ծրագրերը և դասընթացները Մասնաճյուղում կազմակերպվում են վերապատրաստումների, խմբային և անհատական մասնագիտական ուսուցման ու կարճաժամկետ ուսուցման դասընթացների միջոցով, որոնց ուսումնառության արդյունքները գնահատվելու և ճանաչվելու են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով[2]:

6. Լրացուցիչ կրթական ծրագրով ուսուցումը (այսուհետև՝ Ուսուցում) չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառառության արդյունքների պաշտոնական ճանաչման՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

7. Լրացուցիչ կրթական ծրագրին կամ դասընթացին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, եթե բավարարում է տվյալ ծրագրի/դասընթացի մուտքային պահանջներին[3]:

8. Լրացուցիչ կրթության իրականացման առավելագույն տևողությունը մինչև 5 ամիս է:

9. Լրացուցիչ կրթության կազմակերպման մասնակիցներն են՝ Մասնաճյուղը, կրթական ծառայություններ մատուցողները, լրացուցիչ կրթություն ստացողները։

10. Լրացուցիչ կրթական ծրագիրը/դասընթացը իրականացվում է երկկողմ համաձայնությամբ՝ Մասնաճյուղի և կազմակերպության կամ անհատի միջև երկու հավասարազոր օրինակից կնքվող պայմանագրի հիման վրա, որի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը[4]:

---

[2] ՀՀ կառավարության որոշում, 10.09.2015 N1062-Ն, Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին

[3] Պահանջները սահմանվում են Մասնաճյուղի կողմից՝ յուրաքանչյուր լրացուցիչ կրթական ծրագրի համար ՀՀ կրթության մասին օրենքի պահանջներին համապատասխան։

[4] Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման գործընթացը կազմակերպում և համակարգում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ընտրված կազմակերպությունը:

11. Վճարովի լրացուցիչ կրթության իրականացումից հետո պատվիրատուին տրվում է Մասնաճյուղի կողմից հաստատված և կնքված՝ մասնագիտական որակավորում չպարունակող փաստաթուղթ:

II. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

12. Լրացուցիչ կրթությունը կազմակերպելու նպատակով Մասնաճյուղն իրականացնում է.
    1) պատվիրատուի և (կամ) մասնակցի կարիքի գնահատում, պատվերի հստակեցում,
    2) իրականացնող կազմակերպության (և/կամ անհատի) ընտրություն,
    3) լրացուցիչ կրթական ծրագրի, կամ դասընթացի ծրագրի փորձաքննություն,
    4) մշտադիտարկում:
13. Պատվիրատուի և (կամ) անհատի կարիքը գնահատվում է՝ համաձայն Մասնաճյուղի հաստատած կարիքի գնահատման հարցաշարի (Հավելված 1):
14. Լրացուցիչ կրթական ծրագիրը (դասընթացի ծրագիրը) կազմվում է՝ հիմք ընդունելով պատվիրատուի կարիքի գնահատման և մասնակցի ինքնագնահատման արդյունքների վերլուծությունը:
15. Լրացուցիչ կրթական ծրագիր (դասընթաց) իրականացնելու պատվերի մասին տեղեկատվությունը (հայտարարությունը) Մասնաճյուղը տեղադրում է ուսուցման ազգային ռեեստրում և իր պաշտոնական կայքում, որին կից ներկայացնում է լրացուցիչ կրթությունն ապահովող ծրագիրը՝ Մասնաճյուղի տրամադրած մասնագիտական եզրակացության հիման վրա կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տրված երաշխավորությամբ[5]:
16. Մասնաճյուղը յուրաքանչյուր պատվիրատուի հետ կնքում է պայմանագիր, որին կցվում են.

[5] Ներկայացված կազմից պատվիրատուն կարող է ընտրել առավել նպատակահարմար ուսուցման ծրագիրը:

1) կրթական ծրագիրը (դասընթացի ծրագիրը),
2) ունկնդրի համար լրացուցիչ կրթության իրականացման տևողությունը, ժամկետը և ժամանակացույցը,
3) ծրագրի (դասընթացի) վկայականի ճանաչման վերաբերյալ դրույթներ,
4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխան այլ դրույթներ։

14. Մասնաճյուղն ուսուցումն իրականացնում է օրենքով սահմանված ուսուցման ձևերով, մեթոդով (մեթոդներով) և ռեսուրսներով (նյութատեխնիկական միջոցներով)։

15. Ուսուցումը կազմակերպվում է հետևյալ փուլերով.
1) լրացուցիչ կրթական ծրագրի (դասընթացի) և ուսումնամեթոդական փաթեթի մշակում,
2) ծրագրի (դասընթացի) իրականացում,
3) ուսումնառության արդյունքների գնահատում։

16. ՈՒսուցման ծրագիրը ներառում է առնվազն հետևյալ տվյալները՝
1) ծրագրի (դասընթացի) նպատակը,
2) ուսուցման նվազագույն տևողությունը՝ ժամերով,
3) ուսումնառության անկնալվող արդյունքները՝ գիտելիքները, կարողությունները և հմտությունները,
4) դասավանդման կիրառվելիք միջոցները, մեթոդաբանությունն ու ռեսուրսները՝ ըստ մոդուլների, ուսումնառության արդյունքների և (կամ) թեմաների,
5) յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի և կատարման չափանիշի գնահատման մեթոդները։

III. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՃԱՆԱՉՈՒՄԸ

17. Լրացուցիչ կրթության իրականացման համար Մասնաճյուղը պարտավոր է.

1) ուսուցման ծրագրով սահմանված ժամկետում և ընտրված գործիքների կիրառմամբ կազմակերպելու ուսումնառության գործընթացը,
2) ունկնդրի համար ապահովելու ծրագրով (դասընթացով) սահմանված ուսումնառության վերջնարդյունքները,
3) անցկացնելու ունկնդրի ընթացիկ գնահատում և արձանագրելու ունկնդրի կողմից ուսումնառության արդյունքներն ապահովելու հիմքերը:

18. Ունկնդրի կողմից լրացուցիչ կրթական ծրագիրը (դասընթացը) համարվում է հաղթահարած, եթե ունկնդիրը ձեռք է բերել կրթական ծրագրում (դասընթացում) նախանշված ուսումնառության վերջնարդյունքները, որի մասին ամրագրված են համապատասխան հիմքերը:

19. Ուսումնառության արդյունքների վերաբերյալ հիմքեր են հանդիսանում ուսուցում իրականացրած յուրաքանչյուր կազմակերպության կամ անհատի կողմից դասընթացի մասնակիցների վերաբերյալ ըստ ձև 3-ի Մասնաճյուղին տրամադրված տվյալները (Հավելված 4):

20. Լրացուցիչ կրթությունը հաջողությամբ ավարտած ունկնդրին շնորհվում է լրացուցիչ կրթական ծրագրի (դասընթացի) ավարտի վերաբերյալ համապատասխան վկայական[6] համաձայն ձև 1-ի (Հավելված 2) և դրա ներդիրը[7]՝ համաձայն ձև 2-ի (Հավելված 3), որոնք ներառում են ունկնդրի ձեռք բերած ուսումնառության արդյունքների և ժամաքանակի մասին տվյալներ: Վկայականի ներդիրը համարվում է վկայականի անբաժանելի մասը և առանց վկայականի վավեր չէ:

21. Վկայականը և ներդիրը վավերացվում են ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի ստորագրությամբ և կնիքով:

IV. ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

22. Սույն կարգը հաստատվում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

---

[6] Լրացուցիչ ուսումնառության վկայականի, վկայականի հավելվածի կամ հավաստագրի ձևերը, ինչպես նաև դրանց պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

[7] Վկայականի, վկայականի ներդիրների նմուշները Մասնաճյուղը գրանցում է ուսուցման ազգային ռեեստրում:

23. Փոփոխություններ և լրացումներ սույն կարգի մեջ մտցվում են.

1) ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի,

2) Գիտական խորհրդի անդամների,

3) Գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի առաջարկությամբ:

Հավելված 1

Պատվիրատուի և (կամ) անհատի կարիքի գնահատման

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարցաթերթը կազմվում է անհատական և ըստ ընտրված լրացուցիչ կրթական ծրագրի (դասընթացի) դեպքում ընդգրկելու է անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռք բերմանն ու առնվազն հետևյալ կարիքների գնահատմանն ուղղված հարցեր.

1) որոշակի որակավորում կամ զբաղմունք ունեցող անձի դեպքում՝ տվյալ որակավորման չափորոշչով կամ զբաղմունքի նկարագրով սահմանված պայմանների փոփոխությունից (ավելացումից) բխող կարիքներ,
2) անձի կողմից ավելի բարդ գործունեություն (զբաղմունք) իրականացնելու համար անհրաժեշտ կարիքներ,
3) որոշակի զբաղմունք իրականացնելու կամ դրա շրջանակներում՝ որոշակի աշխատանքային խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ կարիքներ,
4) պետության և հասարակության շահերից բխող խնդիրների համար ձեռք բերվող ոչ մասնագիտական (օրինակ՝ քաղաքացիական, մշակութային, մարզական, ռազմական, հայրենասիրական և այլ) կարիքներ,
5) անձնական կրթական պահանջմունքների բավարարմանը միտված կարիքներ:

Հավելված 2

Լրացուցիչ կրթական ծրագրի (դասընթացի) ավարտին ունկնդրին տրվող վկայականի ձևը (**Ձև 1**)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՎԿԱՅԱԿԱՆ _____

Տրված է _____
(ունկնդրի անունը, (հայրանունը), ազգանունը)

(անհատական կոդ՝ _____)

առ այն, որ նա _____ թ. _____ _____-ից _____ թ. _____ _____-ը

մասնակցել է լրացուցիչ ուսումնառության՝ _____ ժամ ընդհանուր տևողությամբ

_____ _____
(ծրագրի կամ դասընթացի կոդը) *(ծրագրի կամ դասընթացի անվանումը)*

_____ կրթական ծրագրին (դասընթացին) և ձեռք է բերել ներդիրում նշված ուսումնառության արդյունքները:

ԵՊՀ ԻՄ տնօրեն _____ _____
(Ազգանուն, անուն, հայրանուն) *(ստորագրություն)*

_____ _____ _____թ. _____
(վկայականի դուրսգրման ամսաթիվը) *(վայրը)*

Գրանցման N _____

Հավելված 3

Լրացուցիչ կրթական ծրագրի (դասընթացի) ավարտին ունկնդրին տրվող վկայականի ներդիրի ձևը **(Ձև 2)**

ՆՎԱՃԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հ/հ	ՈՒսումնառության արդյունքը	Ծախսված ժամա-նակը՝ ժամերով
1.		
2.		
20.		

Հավելված 4

Լրացուցիչ կրթական ծրագրի (դասընթացի) ավարտին ունկնդրի մասին դասընթացն իրականացնող կազմակերպության կամ անհատի կողմից տրվող տվյալների ձևաչափը (**Ձև 3**)

Ունկնդրի (ների) ուսումնառության արդյունքների գրանցման
ՏԵՂԵԿԱԳԻՐ

Լրացուցիչ կրթական ծրագրի անունը՝ _____

Դասընթացի անունը՝ _____

Դասընթացի տևողությունը՝ _____ ժամ

Ժամկետը՝ _____ թ. _____ _____-ից _____ թ. _____ _____-ը

Դասընթացն իրականացնող կազմակերպության անունը _____

_____

Դասընթացն իրականացնող անհատի ազգանունը, անունը, հայրանունը _____

_____

Դասընթացի մասնակցի (մասնակիցների) տվյալները և ձեռք բերած ուսումնառության արդյունքները.

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	անհատա-կան կոդ	ծննդյան ամսաթիվ	սեռ	քաղաքա-ցիություն	Ուսումնա-ռության արդյունք
1.						
2.						

Դասընթացավար՝ _____ _____
(Ազգանուն, անուն, հայրանուն) (ստորագրություն)

“____” _____ 202__ թ.